

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԴԱՆՏ  
«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԴԱՐԱԲԱԴ» ԹԵՐԹԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ  
(1980-1990-ական թթ.)\*

Շուշան Խաչատրյան

**Բամալի բառեր՝** մշակութային երկխոսություն, մշակութային էքսպանսիա, «Սովետական Ղարաբաղ» թերթ, հարցազրույց, գրականություն, փոխազդեցություն:

Տարբեր մշակութային և նոյնիսկ քաղաքակրթական միջավայրերի միջև ամընդհատ ընթացող սերտաճնան գործընթացները պետք է համարել բնական երեւույթ: Մշակութային էքսպանսիայի[1] հետևանքով դոմինանտ համարվող մշակույթները տարածման լայն շրջանակներ են գրավում անցնելով իրենց սեփական երկրամասի սահմաններից[2]: Դարձ է նշել, որ որոշ մշակութաբաններ պնդում են, որ մշակութային էքսպանսիա հնարավոր է հենց այն դեպքում, եթե վերջինս հավակնում է տարածվել ավելի հեռու[3]:

«Դայ ժողովրդի պատմության ընթացքում նրա նկատմամբ նման բազմաթիվ փորձեր եղել են, և շատ դեպքերում դրանց դիմակայման միջոցը եղել է մշակութային ինքնատիպ և առանձնակի համակարգի ձեւավորումը: Այնինչ, հայտնի է, որ քաղաքակրթությունների ու առանձին պետությունների զարգացումը և մրցունակությունը պայմանավորված են գաղափարախոսական այն դրույթներով, որոնցով նրանք առաջնորդվում են: Դամենատական վերլուծություններից կարելի է եզրահանգել, որ աշխարհում ընդհանրապես արդյունավետ են այն գաղափարախոսական հայեցակարգերը, որոնցում ներդաշնակորեն համատեղվում և փոխլրացվում են ազատական, ընկերավարական, ազգային-ազգայնական մոտեցումները: Եվ եթե առաջին երկուսն ընդունված է համարել ունիվերսալ, համամարդկային հասկացություններ, ապա ազգայնական բաղադրիչն ունիկալ, եզակի կատեգորիա է. Այն արտահայտում է տվյալ ազգի սոցիալ-տնտեսական, ռազմաքաղաքական հնարավորությունները, որոնց հիմքում ընկած է հավաքական մտավոր և հոգևոր-մշակութային ներուժը»[4]:

Խորհրդային Ղարաբաղում տեղի ունեցած մշակութային երկխոսությունները չեն կարող չկրել տարրեր վերոհիշյալ հասկացություններից: Այդ համատեքստում կարևոր և հրատապ է այն հանգամանքը, որ ժամանակաշրջանի թելադրած պահանջների պարագայում քաղաքական բնույթի ունիվերսալացումը և գլոբալացումը պարունակում էին հոգևոր-մշակութային առճակատման և էքսպանսիայի տարրեր: Նման գործընթացներում, որպես կանոն, շահում են այն ազգերն ու մշակույթները, որոնք գործում են առավել համակարգված և ակտիվ, մինչդեռ կրավորական դիրքորոշում ընդունածների մշակութային անվտանգությունը և բնականոն զարգացումը ենթարկվում են լուրջ փորձության: Դրանից կարելի է եզրահանգել, որ հոգևոր-մշակութային և այլ քաղաքակրթական հատկանիշներ ունեցող ռեսուրսներն ունեն ռազմավարական նշանակություն և մաս են կազմում ազգային անվտանգության:

Այդ համատեքստում հարկ է նաև նշել, որ չնայած յուրաքանչյուր ազգ կամ ազգություն ունի յուրովի, երբեմն անկրկնելի մշակութային ժառանգություն, սակայն գլոբալ զարգացումների հարթությունում այն միշտ չէ, որ մրցունակ է: Այդ առումով կարևոր է մշակութային ներուժը վերածել քաղաքական-հասարակական ոլորտներում

\* Հոդվածն ընդունվել է 16.03.19:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ բ.գ.դ., պրոֆեսոր Ս. Խանյանը:

## ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2019

արդյունավետ գործող ռեսուլսի: Անցյալ դարավերջից գլուխացման գործընթացների ակտիվացումը հետազոտողների ուշադրությունը սևեռեց ԶԼՄ-ներում ազգային և գլուքալ արժեքների փոխազդեցության խմբի վրա: Հատկապես խորհրդային տարածքում այդ փոխազդեցության հետևանքները դրսևորվում են հասարակական գիտակցության բարդ և հակասական փոփոխությունների պայմաններում, քանի որ ժամանակի բարդ հղուական բաժանումներից, մշակույթն անցյալի, ներկայի, ապագայի տարրեր մշակույթների տեր մարդկանց համաժամանակյա կեցության և հաղորդակցման ձեւ է: Երկխոսության հղացքում մշակույթը դիտարկվում է որպես հնարավոր հաղորդակցման բաց սույրեկտ:

Այս հիմնադրույթի անմիջական դրսևորումներն են բոլոր այն երկխոսությունները, որոնք տեղի են ունեցել նախկին խորհրդային երկրների միջև և լուսաբանվել գործող լրատվամիջոցներով:

Դարարալը՝ որպես խորհրդային շրջանի երկրամաս, անմասն չէր կարող մնալ նման իրադարձություններից. այդ մասին են վկայում «Սովետական Դարարաղ» թերթի համարներում լայնորեն լուսաբանվող բազմաթիվ մշակութային միջոցառումներն ու իրադարձությունները, որոնք տեղի էին ունենում խորհրդային բոլոր երկրներում, հատկապես՝ Ադրբեյջանի, Ռուսաստանի և Վրաստանի մշակութային կյանքը, ինչպես նաև Դարարալում տեղի ունեցող բոլոր մշակութային անցքերը, որոնք երկխոսական բնույթ էին կրում:

Թերթի էջերում լրագրող-մշակույթ երկխոսության դեպքում նորովի էին բացահայտվում լրագրողական տեքստի հնարավորությունները: Մշակութային երկխոսության առնչվող իրատարակությունները երկխոսային տարրեր խաղարկումներով մերձեցնում էին ընթերցողին տարրեր ազգերի մշակութային գործիչների, որի տրամարանական հետևանքն է դառնում վերջինիս փոխազդեցությունը հասարակության վրա: Այս համատեքստում ժամանակի մեջ չխամրած նրանց գաղափարները, ստեղծագործությունները դառնում են քննարկման առարկա, հաճախ նաև՝ առավել ընկալելի և սիրելի:

Այլ պետության նկատմամբ հետաքրքրության դրսևորումը, սոցիալական փորձը, երկխոսության միջոցով ուղիղ ժողովությունները առանձնահատկությունները հասկանալու ցանկությունը կարևոր են ոչ միայն ուրիշ երկրների մշակույթն ու մտածելակերպը հաւաքանալու համար: Դա հանգեցնում է մարդու աշխարհայացքի ընդլայնմանը: Երկխոսային տարրեր հնարքների կիրառմանը մշակութային արժեքներն արդիական հնչեղություն են ծեռք բերում մեծ ժամանակի մեջ՝ դառնալով հեղինակի ներքին երկխոսությունը, մտավորական լսարանին կապող հիմնական օղակը:

Մշակութային հոդվածները դիտարկելով որպես փոխազդեցության հզոր ուժ հասարակության շրջանում հարկ է նկատել, որ դրանք իսկապես ունեն այդ ներգործությունը, և դա հիմնականում վերաբերում է մշակույթի այն գործիչներին, ովքեր ստեղծագործել են ելնելով խորհրդային կարգերի պրոպագանիզման տեսանկյունից: Այսպես, օրինակ, «Սովետական Դարարաղ» թերթում, Այս կերպելի ստեղծագործություններին անդրադարձ անելով, հոդվածագիրը նշում է, որ Վլադիմիր Լյուխ Լենինի կերպարը մեծ տեղ է գրավում քանդակագործի ստեղծագործությունների մեջ. «Կերպելը պատմահեղափոխական թեմաներով ուղիեթների ստեղծման հեղինակն է: Նրա շարքի մեջ են մտնում Հայրենական պատերազմի և աշխատամքի հերոսներ՝ բանվորներ և հերոսներ, կոլտնտեսականներ, տիեզերագնացներ, գրողներ, երաժիշտներ»[5]:

Մշակութային երկխոսության հաճախակի հանդիպող ձևերից է հարցագրույցը: «Սովետական Դարարաղ» թերթը դրսևորում էր մշակութային արժեքների հանդեպ իր առանձնակի վերաբերումները: Նրա էջերում հաճախ էին համեստ զալիս ճանաչված եւ և երիտասարդ ստեղծագործողներ և հաղորդակցության մասնակի պատերազմի և աշխատամքի հերոսներ՝ բանվորներ և հերոսներ, կոլտնտեսականներ, տիեզերագնացներ, գրողներ, երաժիշտներ»:

## ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2019

րույցներն են, որոնք վարում է լրագրողն իր ժամանակակիցի հետ՝ որեւէ մեծ արվեստագետի կյանքի ու գործունեության շուրջ: Այդ տեսանկյունից հարուստ են «Սովետական Դարաբաղի» էջերը: Բազմաթիվ արտատպությունների և հեղինակային հարցագրույցների կարելի է հանդիպել թերթի էջերում, որոնցում ընթերցողին ծանոթացնում են ոչ միայն տվյալ մշակութային գործչին՝ իր ստեղծած արժեքներով, այլև հաճախ տուրք է տրվում տվյալ մշակութային գործչի մարդ տեսակին: Այսպես՝ «Գրականության խմբից» հարցագրույցի մեջ, մերկայացնելով Ռուսամ իբրահիմբեկովին, նշվում է, որ նրա ստեղծագործությունները կերտվում են մարդկության խնդիրների շուրջ: «Խոկ կա՞», արդյոք, հարկ բացատրելու, թե որքան կարևոր է այդ թեման հասարակության մասշտարով, - ասում է իբրահիմբեկովը: Լրագրողը նաև փորձում է իր հարցերի միջոցով նեղ ազգային կաղապարի միջից բարձրացնել արվեստագետին, մերկայացնել նրան որպես համամարդկային արժեքների դաշտանող մշակութային գործիչ: «Չնայած Զեր պիեսների մեծամասնությունը հիմնված է ազգային նյութի հիման վրա, նրանց մեջ բարձրացված պրոյեկտների նշանակությունը զգալիորեն լայն է, - ասում է նա, ինչին ի պատասխան իբրահիմբեկովը պատասխանում է. – Դա ընդհանրապես բնութագրական է սովետական ժամանակակից բազմազգ դրամատուրգիային: Նեղ ազգային «Էքրանգրաֆիկական» ուղղվածության պիեսների ժամանակն անցել է անվերադարձ» [6]:

Ազգերի միջն փոխգործակցության և միջնաց վրա փոխագենելու ներուժ ունի թատրոնը: Այդպես եղել է մինչ խորհրդային կարգերի հաստատումը, այդպես էր խորհրդային տարիներին, այդպես շարունակվում է առայսօր: Դրա տրամաբանական բացատրությունը կայանում է նրանով, որ մի ազգի դերասանը կարող է խաղալ մեկ այլ ազգի գրած ստեղծագործության հիման վրա, ինչի շնորհիվ տվյալ ստեղծագործությունը որոշակիորեն կարող է ներազել առաջինի վրա ինչ-որ չափով դառնալով նաև վերջինիս մշակութային արժեքը: Այս առումով անհնար է թերազնահատել սովետական թատրոնի ենրակատարությունը, որը նպատակառությամբ աշխատանք էր տանում՝ հօգուտ խորհրդային կարգերի պրոպագանիզման ու մեկ միասնական հայրենիք ունենալու գաղափարի կայունացման: Դարարադի գորեթ բոլոր շրջաններում և գյուղերում գործում էին ինքնագործ թատերական խմբեր ու խմբակներ, որոնք բացի երկրանասի մշակութային առօրյան հագեցնելուց, ըստ ամենայնի, իրենց մեջ կրում էին նաև վերոհիշյալ բաղաքական ենթատեքստը: Սովետական թատրոնի, ժամանակային առումով «առավելություններից» մեկն էլ այն էր, որ բնից հաղորդվում էր այն ամենը, ինչը խոչընդոտում է ժամանակի առաջնորդացը: Այսպիսի թատերական երկիր թերևս սովետների երկիրն է: «Մեղ նոտ գործում են հարյուրավոր պետական թատրոններ, ինքնագործ խմբեր: Փոխօգնության և փոխադարձ հարստացման ծանապարհով համաշխարհային ծանաչման են արժանացել ոչ միայն ռուսական, այլև ուկրաինական, ադրբեջանական, վրացական, հայկական և եղբայրական մյուս հանրապետությունների թատրոնները» [7]:

Ուսումնասիրելով «Սովետական Դարաբաղ» թերթի 1980-1990-ական թթ. համարներ՝ ակնառու է դառնում այն փաստը, որ թերթի էջերում լայնորեն լուսաբանվել է աղրբեջանական մշակութային կյանքը: Այսպես, օրինակ, «Ստեղծագործական համագործակցություն» հոդվածում անդրադարձ է կատարվում աղրբեջանցի տարրեր արվեստագետների համագործակցությանը. «Կոնպոզիտոր Ֆիրդեր Ամիրովին, բալետմայստեր Նահյա Նազիրովային և դիրիժոր Նազիմ Ոզաւին մերձեցրել է «Դազար ու մի գիշեր» բալետի վրա կատարած ընդհանուր աշխատանքը Աղրբեջանի Մ. Ֆ. Ախունդովի անվան օպերայի և բալետի թատրոնում» [8]:

Բազմաթիվ հոդվածներում գովերգվում են աղրբեջանական մշակույթը և ընդհանրապես աղրբեջանցի արվեստագետները, ընդ որում նմանատիպ հոդվածների հեղինակները հաճախ հենց արցախցի լրագրողներն ու արվեստաբաններն են. «Խոկական ծշմարիտ արվեստագետների ստեղծագործությունը նման է լինում արիության: Նրանք դառնում են ոչ միայն իրենց ժամանակի տարեգիրը, այլ ռեալիստորեն արտահայտում

## ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2019

Են այն բոլոր գաղափարները, որոնցով ապրում են ժողովուրդները, որոնցով բացվում է ազատության ծանապարհը: Ժողովրդական տրամադրությունների արտահայտիչ է աղրբեջանական գրականության դասական Զաֆար Զաքարլին: Եվ բնական է, որ այսօր նրա հորենյանի նշումը վերածվել է ժողովուրդների բարեկամության տոնի»[9]:

Աղրբեջանական մշակույթի փոխազդեցությունը երևան է գալիս այն հոդվածներում, որտեղ դարաբացի ընթերցողն է խոսք ասում այս կամ այն մշակութային գործչի մասին: Այսպես, օրինակ, «Մեծ գրողն ու քաղաքացին» հոդվածում գովերգվում է աղրբեջանցի գրողը. «Աշխատանքի հերոս, Աղրբեջանի ժողովրդական գրող Սուլեյման Ռահիմովի ստեղծագործությունները հասկանալի և հարազատ են ոչ միայն աղրբեջանցի, այլև մեզ՝ հայ ընթերցողներիս համար: Նրա վեպերն ու վիպակները, պատմվածքներն ու այլ ստեղծագործությունները ընթերցողին գրավում են կյանքի արտացոլման խորությամբ, պատկերավորությամբ, արտահայտած գաղափարների վսեմությամբ ու վեհությամբ, հումանիզմով: Չամոն, Չողի ձայնը, Աղրուլաղի լեռներում, Արփաչայի լեգենդը և ուրիշ շատ ու շատ գործերի հերոսներ մնաց սովորեցնում են լավատեսությամբ ու պայծառ հայացքով նայել կյանքին, սիրել գեղեցիկը, բարին, ատելությամբ լցվել չարի, հակամարդկայինի հանդեպ: Մեծ գրողի և պայծառ քաղաքացու՝ Սուլեյման Ռահիմովի ստեղծագործությունները ոգեշնչում են մեզ ապրել գեղեցիկ, աշխատել նվիրվածությամբ», -իվան Մանասյան, շինարար[10]:

Եվ թեև «Սովետական Ղարաբաղ» թերթում անդրադարձ է արվում ԽՄԴՍ բոլոր երկրների մշակույթներին ինչպես, օրինակ, Սոլյովիային, Ֆրանսիային, Վրաստանին, Ռուսաստանին, սակայն, այնուամենամենիվ հիմնական ուշադրության կենտրում մշտապես լինում է աղրբեջանական մշակույթը, աղրբեջանցի արվեստագերների հորենյան ներին նվիրված հոդվածները թերթի էջերում մեծ տեղ են գրավում ընթերցողին մանրամասն ներկայացնելով նրանց ստեղծագործությունները, կյանքն ու կենսագրությունը՝ դրա հետ մեկտեղ վերջիններիս համարելով նաև արցախյան արվեստի մասմիկ: Այսպես, օրինակ. աղրբեջանցի գրող Սուլեյման Ռահիմովի 80-ամյակին նվիրված հոդվածում, անդրադարձնալով նրա կենսաւորում և ստեղծագործություններին, հոդվածագիրը նրան համարում է ոչ միայն զուտ աղրբեջանցի, այլև ժողովրդական գրող, ով եղայրության ու բարեկամության երգիչ է, հայ ընթերցողների սիրված բարեկամ. «Անաթե ինչու մենք նրան մտերմաքար Սուլեյման ենք կոչում կամ Սուլեյման Մուալիմ»[11]:

Մշակութային երկխոսության ակնառու դեպքերից են նաև այն, որ «Սովետական Ղարաբաղ» թերթի էջերում ընթերցողին ծանոթացնում են Աղրբեջանի պահանջական համարվող երաժշտական գործիքներին. «Թառ ու քամանչա՝ այսպիսի գործիքներ է պատրաստում Զաքարթալա քաղաքի բնակիչ Թալեք Գարուլովը /Ազերինֆորմ/ այդպիսով՝ Ղարաբաղում տարածելով աղրբեջանական պահնություններն ու մշակույթը [12]: Աղրբեջանի հետ մշակութային երկխոսության ակնառու օրինակներից են Ազերինֆորմ լրատվական ծառայությունից բազմաթիվ հղումներ, այսպես օրինակ՝ «Բանաստեղծի անմահ մուսան» հոդվածում ներկայացնելով Նիզամի Գյանջևին՝ նշվում է. «Դիանալի նվեր ստացան Նիզամի Գյանջևի երկրպագուները: Սովետսկի պիտառել հրատարակչության լենինգրադյան բաժանմունքում Բիբլիոտեկա Պոնտա սերիայով լուս է տեսել խոսքի մեջ վարպետի ստեղծագործությունների միհատորյակը: Նրա մեջ են մտնում բանաստեղծի բանաստեղծություններն ու պոեմները: Դրատարակությունը հագեցված է տեղեկատու ընդարձակ ապարատով՝ ծանոթագրություններով և Նիզամու ստեղծագործություններում համդիպող հատուկ անունների, տեղանունների, աշխարհագրական անվանումների և չքարգմանված բառերի բառարաններով» [13]:

Դատկանշական է այն փաստը, որ աղրբեջանցի մշակույթի գործիքներին նվիրված հոդվածներում հիմնականում շեշտը դրվում է նրանց՝ որպես բարեկամության, եղբայրության երգիչների մտքիմ այդպիսով փորձ անելով Ղարաբաղում տարածել ու սիրելի դարձնել աղրբեջանական մշակույթն ու ավանդությները. «Միրզա Իբրահիմովը պատկանում է աղրբեջանական սովետական այն գրողների շարքին, որոնց անունները

## ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱԼԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2019

միանգամից հայտնի են դարձել ոչ միայն իրենց մայրենի գրականության, այլ նաև մեր անծայրածիր երկրի բոլոր ժողովուրդների մշակույթների մեջ», - այսպես է նկարագրվում «Բարեկամության երգիչը» հոդվածում աղորեցանցի բանաստեղծ Միրզա Իրրահիմովը [14]:

«Կարա Կարակի ծննդյան 70-ամյակի առթիվ»[15] մի ամբողջ էջ էր տրամադրված աղորեցանցի երաժշտին: Ներկայացնելով նրան որպես ոչ միայն աղորեցանական, այլև սովետական բազմազգ կուլտուրայի զարգացման ականավոր գործիչ, թերը գրում է. «Նա իր ամբողջ կյանքը նվիրաբերել է երաժշտության բնագավառում կուսակցականության, ժողովրդայնության, ինտերնացիոնալիզմի, քաղաքացիականության, կոմունիստական պայծառ իդեալների հաստատմանն ու զարգացմանը...»

Այսպիսով, լայնորեն ուսումնասիրելով այլ ազգերի, հատկապես աղորեցանական մշակույթի փոխազդեցության ուժը դարարացիների վրա, կարելի է նկատել, որ Խորհրդային Աղորեցանի վարած քաղաքականությունն այն է բոլոր լժակները, այդ թվում նաև մշակութայինը օգտագործելով՝ հասմել Ղարաբաղի հայերի ուժացմանը, նրանց մեջ սերմանել սեր դեպի աղորեցանական բարերն ու մշակույթը: Պարզ է դառնում, որ դա արվում էր հասուկ ծրագրով, գրաքննության և քարոզության խիստ պայմաններում:

Ասվածի վկայություն է այն փաստը, որ 1988 թ. վերջերին և նրա հաջորդած տարիների ընթացքում մշակութային երկխոսությունը հետզինետ ընդհատվում, այնուհետև իսպառ վերանում է, ինչի ապացույցն են թերթի էջերում այդ տարիներին տպագրվող այն նյութերը, որոնց հեղինակները ծգուում էին հասարակությանը դուրս բերելու աղորեցանական մշակութային հորձանուտից՝ դրա փոխարեն վերիշելով մոռացված դարաբաշխ ավանդույթներն ու մշակութային բարերը: Մեկը մյուսի հետևից իրար են հաջորդում նմանատիպ հոդվածներ՝ «Մանուկի պատությունը՝ հայկականության պացույց»[16], «Վերածննդի վկայական»[17], «Անանուն հոլշարձաններ»[18] և այլն:

Մշակութային և գլորալ արժեքների երկխոսությունների իմաստային դաշտը լայն է ու բազմաշերտ: Գլորալ արժեքների տեղայնացման և ազգայինի գլորալացման գործընթացներն ու շագագործությունները են ստացել թերթի հրապարակումների երկխոսային դիսկուրսում: Թերթում հաճախ էին տպագրվում գլորալ մշակութային արժեքների բարձր վարկը պահպանող ու այդ ուղղությամբ ստեղծագործող արվեստագետների մասին հրապարակումներ, ովքեր անգնահատելի էին համարվում՝ իրու միացյալ մշակույթի կերտողներ:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. (լատիներեն *expansio* — տարածում)
2. [http://its-journalist.ru/Articles/kul.\\_turnaya\\_e-kspansiya\\_kak\\_forma\\_mezhkul.\\_turnoij\\_kommunikacii.html](http://its-journalist.ru/Articles/kul._turnaya_e-kspansiya_kak_forma_mezhkul._turnoij_kommunikacii.html)
3. *Кравченко А.И. Культурология: Учебное пособие для вузов.— 3-е изд. М.: Академический Проект, 2002.— 496 с.*
4. <http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Hayagitutyuny%20dprocum/2010%281%29.pdf>
5. Սովետական Ղարաբաղ, 23 դեկտեմբերի 1982թ. 234
6. Սովետական Ղարաբաղ, 14 հուլիսի 1982թ. 163, 13455
7. Սովետական Ղարաբաղ, 27 մարտի 1983թ. 71, 13663
8. Սովետական Ղարաբաղ, 25 դեկտեմբերի 1981թ. 296
9. Սովետական Ղարաբաղ, Խսկական ինտերնացիոնալիստը, մեծ գրողը, 23 մարտի 1982թ. 71, 13363
10. Սովետական Ղարաբաղ, 27 մարտի 1980թ. 69, 12761

## **ՄԵՐՐՈԴ ՄԱՀԾՏՎԵ ՀԱՍԱԼԱՄԱՆԻ ԼՐԱՏԾՈՒ 2019**

11. Սովետական Ղարաբաղ, Սոլեյման Ռահիմով-80, 22 մարտի 1980թ. 69, 12761
12. Նման հոդվածները հիմնականում հղումներ են Ազերինֆորմ լրատվական գործակալությունից կամ էլ աղբքեցանցի հեղինակների հոդվածները:
13. Սովետական Ղարաբաղ, 18 սեպտեմբերի 1981թ. 223, 13213
14. Սովետական Ղարաբաղ, 16 սեպտեմբերի 1981թ. 221, 13213
15. Սովետական Ղարաբաղ, 19 փետրվարի 1988թ. 33
16. Սովետական Ղարաբաղ, 10 հունիսի 1990թ. 109, 15804
17. Սովետական Ղարաբաղ, 21 մարտի 1990թ. 40, 15735
18. Սովետական Ղարաբաղ, 27 օգոստոսի 1988թ. 209:

### **ԱՄՓՈՓԱԳԻՐ**

**Մշակութային երկխոսությունը որպես փոխազդեցության դաշտ «Սովետական Ղարաբաղ» թերթի հրապարակումներում  
(1980-1990-ական թթ.)  
Շուշան Խաչատրյան**

Քննության առնելով Սովետական Ղարաբաղ թերթի 1980-1990-ական թթ. համարները՝ պարզություն նկատվում է, որ թերթն ամենայն պատրաստականությամբ մտնում էր մշակութային երկխոսության մեջ խորհրդային գրեթե բոլոր երկրների հետ, ծավալում մեկնաբանում այլ երկրներում տեղի ունեցող մշակութային միջոցառումները: Առավել սերտ և նպատակային է այդ երկխոսությունը հատկապես Աղբքեցանի հետ: Բազմաթիվ միջնշակութային միջոցառումներ, մեծարման երեկոներ և ազգային- ավանդական արժեքների բացահայտումներ են գետեղված թերթի էջերում, որոնք հաճախ դառնում են ղարաբաղա-աղբքեցանական մշակույթի հանահարեցման փորձեր: Այդքանով հանդերձ՝ հարկ է նկատել և ըստ արժանվույն գնահատել այն հայ հեղինակներին և արվեստի գործիչներին, ովքեր նման պայմաններում անգամ շարունակեցին ստեղծագործել գուտ ազգային կոլորիտով՝ անտեսելով եղբայրության կոչով հանդես եկող աղբքեցանական մշակույթի գործիչների հորդորները ստեղծել մեկ միացյալ մշակութային պատմություն:

### **РЕЗЮМЕ**

**Культурный диалог как поле взаимодействия: на примере публикаций газеты**

**“Советский Карабах” (1980–1990 гг.)**

**Шушан Хачатрян**

**Ключевые слова:** культурный диалог, культурная экспансия, газета “Советский Карабах”, интервью, литература, взаимодействие.

В процессе изучения номеров газеты “Советский Карабах” за 1980–1990 гг. становится очевидным, что газета активно вступала в культурный контекст практически со всеми странами советского пространства, всесторонне освещала культурные мероприятия, проводимые в этих странах. На страницах газеты размещены статьи о межкультурных мероприятиях, вечерах чествований и национальных традиционных ценностях, которые зачастую становились попытками представить карабахскую культуру как часть азербайджанской. Вместе с тем необходимо отметить и по достоинству оценить тех армянских авторов и деятелей искусства, которые в подобных условиях продолжили творить с исключительно национальным колоритом, игнорируя пожелания деятелей азербайджанской культуры, выступающих с братским призывом к созданию одной единой культурной истории.

SUMMARY

Cultural dialogue as a field of interaction: on the example of “The Soviet Karabakh” newspaper publications (1980-1990)  
Shushan Khachatryan

**Keywords:** cultural dialogue, cultural expansion "The Soviet Karabakh", newspaper, interview, literature, interaction.

While studying the issues of “The Soviet Karabakh” newspaper for 1980-1990, it becomes obvious that, the newspaper actively entered the cultural context with almost all countries of the Soviet space, comprehensively covered the cultural events held in these countries. The newspaper pages comprise the articles about intercultural events, celebrations and national traditional values, which often became the attempts to present the Karabakh culture as a part of Azerbaijani culture. At the same time, it is necessary to note and appreciate those Armenian authors and artists who continued to create with exclusively national color under such conditions, ignoring the wishes of the Azerbaijani culture figures and their fraternal appeals for the creation of a single cultural history.